

Կուտակային ժամկետային ավանդի տոկոսագումարի հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Տոկոսագումարի հաշվարկը օրական կտրվածքով կատարվում է հետևյալ բանաձևով՝

Մայր գումար x Տոկոսադրույք

365 (կամ 366 նահանջ տարվա դեպքում)

Մայր գումարը տվյալ օրվա դրությամբ ժամկետային ավանդի մնացորդն է: Տվյալ օրվա դրությամբ Մայր գումարը կարող է կազմված լինել Ավանդի սկզբնական գումարից, կապիտալացված տոկոսագումարից (կուտակային ավանդների դեպքում), կուտակային ավանդի պարբերական ներդրումների գումարից (կուտակային ավանդների դեպքում):

Տոկոսադրույքը տվյալ ավանդի և ժամկետի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքն է:

Ներկայացուցչական օրինակ.

- Ավանդի գումար՝ 100,000 ՀՀ դրամ
- Ամսական ներդրումներ՝ 10,000 ՀՀ դրամ
- Առաջին ներդրման ամսաթիվը՝ 01.06.2018
- Ընդհանուր ներդրումների քանակը՝ 17
- Ավանդի ժամկետ՝ 36 ամիս
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 7.50%
- Տոկոսագումարի վճարման եղանակ՝ տոկոսագումարի ամսական կապիտալացում
- Հաշվետու տարվա օրերի քանակ՝ 365/366
- Ավանդի բացման ամսաթիվ՝ 01.05.2018
- Ավանդի վերջնաժամկետ՝ 30.04.2021

Կուտակային ժամկետային ավանդի վերջնական մնացորդի հաշվարկ

Հաշվարկված
տոկոսագումար¹
ավանդի ամբողջ
ժամկետի համար

$$= 55,739 \text{ ՀՀ դրամ}$$

Տոկոսային եկամտից
հարկ 10%

$$= 55,739 \times 10\% = 5,574 \text{ ՀՀ դրամ}$$

Վճարված զուտ
տոկոսագումար

$$= 55,739 - 5,574 = 50,165 \text{ ՀՀ դրամ}$$

Ավանդի վերջնական գումարը ավանդի ժամկետի վերջում (մայր գումար + ավանդի ժամկետի ընթացքում կատարված ներդրումներ+մայր գումարի վրա հաշվարկված և վճարված տոկոսագումար+կապիտալացված տոկոսագումարի վրա հաշվարկված և վճարված տոկոսագումար) = $100,000 + 17 \times 10,000 + 50,165 = 320,165$ ՀՀ դրամ:

¹Տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի բացման ամսաթվից մինչև ավանդի վերջնաժամկետը (տոկոսագումարը չի հաշվարկվում ավանդի վերջնաժամկետի օրը):

Թարմացվել է՝ 18/01/2019 15:00